

ՅՈՒՆԵՍԿՈ

ԳՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ 20-ՐԴ

ԴԱՐԱՍԿՁԲԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Համառոտ ակնարկ ծննդեան 140 և մահուան 75-ամեակներուն առթիւ)

1878-ին Պոլսոյ Իսկիւտար թաղին մէջ լոյս աշխարհ կու գար մանուկ մը, որուն պիտի վիճակուէր դառնալ ոչ միայն հայ, այլեւ միջազգային շափանիշով աչքի զարնող երեւոյթ մը: Այդ մանուկը հետագային պիտի դասէին դարուս հինգ նշանաւոր կիներէն մէկը: Ան Ջապէլ Յովհաննէսեանն էր, որ ամուսնանալէ ետք նկարիչ Տիգրան Եսայեանի հետ, պիտի կոչուէր Ջապէլ Եսայեան:

Պատանեկութիւնը անցած էր իր առեւտրական հօր տնտեսական վերիվայրումներու և յարափոփոխ պայմաններու մէջ: Ուսումնատենչ էր հայրը և կը հաւատար իր դստեր ուժերուն: Հետեւաբար թաղի Ս. Խաչ դպրոցը աւարտելէ ետք ան կը քաջալերէր երիտասարդութեան նոր սեմին մտած տասն և եօթ տարեկան Ջապէլը, որպէսզի հետեւէր Եւրոպայի ամենէն բարձր վարկանիշը վայելող Սորպոնի Համալսարանին գրականութեան ճիւղին (պատմութիւն, հոգեբանութիւն, ընկերային-հասարակական գիտութիւններ): Այսպիսով ան կ'ըլլար իգական սեռի ԱՌԱՋԻՆ ներկայացուցիչը, որ որպէս Օսմանեան կայսրութեան քաղաքացի կը հետեւէր համալսարանական կրթութեան՝ գիտութեան վերոյիշեալ տաճարին մէջ:

Ի պատիւ Զ. Եսայեանի պէտք է ըսել թէ որպէս Փրանսերէնի գիտակ ան կը սկսի տպուիլ ատենի ամենէն հռչակուած վարկ վայելող Mercure de France-ի մէջ: Այս երեւոյթը չի վրիպիր Փարիզ հաստատուած Արշակ Զօպանեանի ուշադրութենէն (Համիտեան հալածանքներու պատճառով Ա. Զօպանեան չէր կրնար Պոլիս վերադառալ): Մեծանուն գրողն ու գրականագէտը կը հրաւիրէ աշխատակցիլ «Ծաղիկ» և «Անահիտ» թերթերուն:

Ջապէլ Եսայեան, որ փոքր տարիքէն յայտնի էր որպէս ըմբոստ, բայց ոչ ապստամբ ու խռովարար պարմանուհի մը, կը զգար որ իր տեղը Պոլիսն է, հայութիւնը և կանանց յառաջդիմութեան համար տարուող աշխատանքներու միջավայրը, ուր պարարտ հող կար իր մասնագիտութիւնը ի սպաս դնելու: Հետեւաբար ուսումն աւարտելէ ետք կը վերադառնայ Պոլիս, ուր շատ գործ կար կատարուելիք, մանաւանդ օրիորդաց ու կանանց իրաւունքներու, պարտաւորութեանց, ուսման ու հասարակութեան զարգացման աւելի՛ պիտանի դառնալու բնագաւառին մէջ:

Պոլսոյ մէջ իրմէ առաջ և իր շրջանին արդէն կարգ մը լուսաւոր կիներ հիմը դրած էին կանանց ազատագրութեան գործընթացին, յատկապէս կեդրոնանալով անոնց հասարակական և մանաւանդ կրթութեան ու դաստիարակութեան դերին բարձրացման վրայ: Սրբուհի Տիւսաբ, Ջապէլ Ասատուր, Արշակունի Թէոդիկ, յետագային Հայկանոյշ Մարգ յոյլին վրայ որպէս թարմ ոյժ կ'աւելնար Ջապէլ Եսայեան, որ ոչ թէ միայն գիրքերու և մամուլի միջոցաւ ծանօթ էր Եւրոպական կանանց շարժումներուն, այլ տեղւոյն վրայ ծանօթացած էր Եւրոպական մայրաքաղաքներուն մէջ տեղի ունեցող

խմորումներուն:

ՊՈԼԻՍ ՎԵՐԱԴԱՐՁԷՆ ԵՏՔ

Թէ ի՞նչ կը դառնար և մինչեւ ո՞ր կը բարձրանար Զ. Եսայան «Լոյսի քաղաքին» մէջ՝ կարելի է գուշակել, բայց Պոլիս վերադարձէն ետք երիտասարդ համալսարանաւարտ ու խոհուն մտաւորական Զապէլ Եսայեան իր առջեւ կը գտնէր գործունէութեան ընդարձակ ասպարէզ մը: Իր դաւանած սկզբունքները կիրարկելու, հասարակութիւնը բարեշրջելու և հայ կանանց դերը բարձրացնելու նախանձախնդրութեամբ ան «կը յարձակի» մի քանի ճակատներու վրայ:

Ա.- Գրականութիւն

Թուենք Զապէլ Եսայեանի գործերը՝ արձակ և բանաստեղծութիւն: Գրած է վիպակներ, պատմութեան, հրապարակախօսական ակնարկներ և յօդուածներ, ճամբորդական նկարագրութիւններ, որոնցմէ յիշատակելի են հետեւեալները՝ «Կեղծ հանճարներ», «Վերջին բաժակը», «Հոգիս աքսորեալ», «Սիլիհտարի պարտէզները», «Աւերակներու մէջ», «Նահանջող ուժեր», «Կրակէ շապիկ», «Պրոմէթէոս ազատագրուած»:

Գրագիտուհիին արձակ ստեղծագործութիւններուն մէջ ստուար թիւ մը կը կազմեն կնոջ հոգեկան աշխարհին, իւրայատկութեանց, հասարակական դիրքին նուիրուած գործերը: Հետեւեալ տողերը լաւագոյնս կ'արտայայտեն Զ. Եսայեանի գաղափարական հիմքը: Ան կը գրէ. «Կինը աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար: Կինը ծնած է իր խելքը, մտային, բարոյական և ֆիզիքական յատկութիւնները զարգացնելու համար: Ինքզինքնին յարգող բոլոր կիներուն իտէալը միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրան գործօն բարերար մը դառնալը»: Եւ այս տողերը գրուած են աւելի քան դար մը առաջ, երբ կիները կը նկատուէին լաւագոյն պարագային թանկագին կարասի մը, բիրեղեայ անօթ մը, բայց հասարակութեան մէջ անոնց դերը խիստ սահմանափակուած էր անցնող դարերու քաղաքակրթութեան մէջ ամրացած կաղապարներու պատճառով - կինը Եւան էր, որ խաբէց Ադամը, ան՝ այր մարդը թիկունքէն զարնողն է, չարիքներու աղբիւրը, փառասէրը, պճնասէրը եւայլն, եւայլն:

Փաստօրէն կինը զոհն էր այր մարդու տիրապետութեան և գերակայութեան անհեթեթութեան: Կնոջ սրբազան պարտականութիւնն էր «հնազանդ ըլլալ ամուսինին» (յիշեցէք Ս. Պսակի խորհուրդի ժամանակ քահանայի հարցումը), հոգալ այր մարդուն ֆիզիքական և այլ կարգի պէտքերը (մինչեւ իսկ ոտքերը լուալ), ինքնապաշտպանութեան համար պատասխան չտալ ամուսինին, տխեղծ մանուկի ծնունդին համար պատասխանատու և յանցաւոր նկատուիլ և նման բաներ:

Զապէլ Եսայեան, ինչպէս իրեն ժամանակակից մտաւորական ափ մը լուսաւորեալ կիներ, աւելի խորութեամբ կը ներկայացնէր կնոջ դերը առողջ հասարակութիւն մը և հետեւաբար առողջ ազգ մը կերտելու ջանքերուն մէջ: Եսայեանի վէպերուն և վիպակներուն մէջ յատկանշական կը դառնան կանանց հոգեբանութիւնը վերլուծող միտումներ: Կնոջ հոգին նուրբ է, երբեմն անմեկնաբանելի, խորունկ և առեղծուածային, որոնք զինք կը զատորոշեն այր մարդէն, բայց չեն հակադրուիր կամ հակասութեան մէջ չեն մտներ այր և կին յարաբերութեան մէջ: Այլ՝ կինը կ'ամբողջանէ ու կ'առողջացնէ մթնոլորտը:

Բնականաբար Զապէլ Եսայեան իր արձակ գործերուն մէջ պիտի անդրադառնար ամուսնութեան հարցին: Իր համար ընտանեկան առողջ մթնոլորտը կը սկսի ապագայ կողակիցներու ազատ ընտրութեամբ:

Հայ գրականության մէջ Զ. Եսայեան տակաւին չգերազանցուած գրագիտուհին է հոգեբանական վէպին: Ան՝ կնոջ նրբագոյն զգացումները կը փնտռէ ու խորապէս կը թափանցէ կնոջ հոգեկան նուրբ ծալքերէն ներս: Ոչ ոք մեր գրականության մէջ իր չափ չթափանցեց կնոջ փխրուն հոգիէն ներս՝ ներկայացնելու համար կնոջ մը լուռ տառապանքները և թաքնուած արցունքները: «Հոգիս աքսորեալը» ստեղծագործութեան մէջ ան խոր հարազատութեամբ կը ներկայացնէ արուեստագիտուհի մը հոգեվիճակը, ուր կինը չ'արժանանար պէտք եղած ուշադրութեան, կը դառնայ հասարակութեան անտարբերութեան առարկան, մինչ ինք կ'ուզէր գնահատուիլ որպէս արուեստագիտուհի:

«Համբերութեան բաժակը» կը ներկայացնէ կինը, որուն նմանները շատ շատ էին, և են, մեր հասարակութեան և այլ ազգերու հասարակութեանց մէջ: Խորաթափանց ու իրապաշտ վերլուծումներով հեղինակը ցոյց կու տայ կինը, որ թէեւ կը սիրէ, բայց նախապաշարումներու կծիկ մըն է, պատճառը՝ իր չսիրած անձին հետ ամուսնացած ըլլալն է:

Հերոսական հայ կնոջ կերպարը չէր կրնար վրիպիլ Զապէլ Եսայեանի ամենատեսաւաքէն: 1909-ի Ատանայի կոտորածէն անմիջապէս ետք ան պատուիրակութեամբ մը կը ղրկուի Կիլիկիա, ուր ականջալուր և ականատես կ'ըլլայ հայ ժողովուրդի քանի մը օրուայ ընթացքին ենթարկուած կոտորածներու և սարսափներու նկարագրութեանց ու տեսարաններու, բայց այդ ահաւոր դէպքերու ընդմէջէն ան կը յայտնաբերէ հերոսական հայ կիներ, որոնք իրենց եղբայրներուն և ամուսիններուն կողքին հաւասարապէս զէն ի ձեռին կռուեցան թրքական ուժերու դէմ: «Աւերակներուն մէջ» վերնագրուած գեղարուեստական յատկանիշներով հարուստ յուշագրութեան մէջ ան կը նկարագրէ Ատանայէն արեւելք գտնուող Չորք-Մարզպան աւանի մէջ հանդիպած իգական սեռին պատկանող կենդանի վկաներու, որոնք իրենց մէջ պահած էին մեր ցեղին իւրայատուկ մարտնչող ոգին ու վճռակամութիւնը:

Զապէլ Եսայեանի սոյն գիրքը ներշնչման աղբիւր դարձաւ պոլսահայ մտաւորականութեան և յատկապէս հայ յառաջադէմ կանանց համար, որոնք իրենց ուշադրութիւնը սեւեռեցին Կիլիկիոյ այս գեղատեսիլ ափերուն և լեռնալանջերուն վրայ ապրող հայութեան վրայ:

Բնաւորութեամբ ու խառնուածքով հաւասարակշռուած ըմբոստ մըն էր Զապէլ Եսայեան, յատկապէս երբ հարցը կը վերաբերէր ճշմարիտ արժէքներու պահպանման ու արմատաւորման: Ամէն հին ու աւանդական սովորութիւն անվերապահօրէն օգտակար չէր: Կային իրենց դարը վաղուց ապրած աւանդութիւններ, սնտոխապաշտական ու յետադիմական կեցուածքներ ու նախապաշարումներ, որոնք կը խանգարէին հասարակութեան առաջընթացը: Մանաւանդ կեղծիքը և աւելորդապաշտութիւնը չէին հանդուրժուեր իր կողմէ, որովհետեւ անոնք կը խոչընդոտէին հասարակութեան առողջ երթը:

Այս առումով ուշագրաւ է դեռ շատ երիտասարդ տարիքին գրած «Կեղծ հանճարներ»-ը, ուր հեգնութեան կ'արժանանան յատկապէս Փարիզի մէջ համբաւ փրնտուող կարգ մը մտաւորական գրողներ: Կարելի է հարիւր առ հարիւր չհամաձայնիլ գրագիտուհիին չափազանցեալ բնորոշումներուն հետ, սակայն կային նկատի առնուելիք դիտողութիւններ իր մօտեցումներուն մէջ: Այր-կին, հարուստ-աղքատ, հարուստ փեսացու-հարսնցու թեմաներուն կը հանդիպինք նաեւ իր այլ գործերուն մէջ, ինչպէս՝ «Սկիւտարի վերջալոյսներ», «Շնորհքով մարդիկ», «Սիլիհտարի պարտէզները» եւ այլն:

Բ.- Քաղաքականութիւն և հասարակական գործունէութիւն

Վերոյիշեալ ասպարէզները կարելի է նկատել Զապէլ Եսայեանի մղած ռազ-

մաճակատի յաջորդ դաշտը:

Նախ պէտք է միանգամընդմիջտ արձանագրել որ Զ. Եսայեան լուսաւորեալ մարդասէր մըն էր (humanist): Ան հեռու էր ազգային մեծամտութենէ և գերակայութեան զգացումէ: Մարդը մարդ էր իր համար: Որպէս հասարակական գործիչ ան իր կարելին ըրաւ օգնութեան ձեռք մեկնելու աննեցուկին ու իր տունէն տեղէն բռնի կերպով տեղահանուածին և պատերազմի պատճառով փախստական դարձածներուն՝ առանց հաշուի առնելու տուժուածներուն ազգային կամ կրօնական պատկանելիութիւնը:

Պատմութիւնը արձանագրած է կարեւոր փաստեր այս առնչութեամբ: Այսպէս, Պալքանեան պատերազմի տարիներուն (1912-1913) հազարաւոր թուրքեր կամ թրքացուածներ և մահմետականներ մազապուրծ ազատուելով կռիւներու արհաւիրքներէն, եկան և լեցուեցան Պոլիս: Պոսֆորի ափերը և համեստ թաղերն ու հրապարակները կը վիտային անոնցմով: Զապէլ Եսայեան եղաւ այն ազնիւ կինը, որ ոգի ի բոլին իր հայրենակիցներուն կոչ ըրաւ խղճալ ու նեցուկ կենալ ինկածներուն ու սոված ծառաւ Պոլսոյ ափերը հասած մարդոց: Միայն ազնուագոյն հոգի մը կրնար այսպէս վարուիլ փոխանակ ներքուստ հրճուելու: Ինչ հեգնանք սակայն, որ Զապէլ Եսայեան միակ կինն էր, որուն անունը կը գտնուէր Օսմանեան Թուրքիոյ ներքին գործոց նախարարութեան կողմէ պատրաստուած հայ մտաւորականներու ցանկին մէջ...

Օսմանեան կայսրութեան իգական սեռին շահերու պաշտպանութեան ուղղութեամբ ան իր հրապարակագրական գրութիւններով և գործունէութեամբ կը պայքարէր կանանց բարոյական և մտաւորական վիճակը բարեփոխելու» համար: Հայ կինը պէտք է իր բոլոր ունակութիւնները ի սպաս դնէր հասարակութեան բարելաւման ու առողջացման, չտարուէր արտաքին շպարով և մարդը չչափէր իր հագուստէն, տան կահ կարասիներէն ու գործածած գոհարեղէններէն: Զէք կարծեր որ այսօր ալ տակաւին կան բազմահազար կիներ, որոնք իրենց շրջապատի կիները կը գնահատեն կամ կ'արժեւորեն իրենց բարձրորակ ու սուղնոց զգեստներով, պայուսակներով և կօշիկներով...

Զապէլ Եսայեանը գործօն առաքելութեան մէջ կը տեսնէր նաեւ Պօղոս Նուպար փաշայի ծրագիրներուն մէջ: Վերջինիս խնդրանքով ան կը շրջի Միջին Արեւելքի աքսորավայրերը, ապաստարանները, հիւղաւաններն ու որբանոցները՝ նպատակ ունենալով յստակ ու ճշգրիտ պատկերը ներկայացնելու աշխարհի այս տարածաշրջանին մէջ իր գոյութիւնը քաջքշող արեւմտահայ գաղթականներուն և մնացորդացին, որպէսզի ի վերջոյ Պօղոս Նուպար կարենար թիւերու լեզուով խօսիլ Ազգերու լիկայի և մօտալուտ եւրոպական համաժողովներուն մասնակից պետութիւններու ղեկավարներուն հետ:

Հայաստանի Հանրապետութեան հռչակումէն անմիջապէս ետք (28 Մայիս, 1918-ին) Զապէլ Եսայեանը կը տեսնէր Աւետիս Ահարոնեանի գլխաւորած Ազգային պատուիրակութեան մէջ՝ որպէս խորհրդական և բարձրորակ թարգմանիչ:

1927-ը բեկումնային տարի մը կ'ըլլայ Զապէլ Եսայեանի կեանքին մէջ: Ինք անկուսակցական մըն էր և զինք կը մտահոգէր հայութեան ապագան: Հետեւաբար, անսալով նորաստեղծ Խորհրդային Հայաստանի ղեկավարութեան, ի մասնաւորի Ալեքսանտր Միասնիկեանի կոչին, ան կ'այցելէ Հայաստան: Այստեղ ան իր աչքերով կը տեսնէ տոտիկ-տոտիկ ոտքի կանգնող և իր վէրքերը բուժող հայրենի ժողովուրդին ջանքերը: Ան որոշում կը կայացնէ վերջնականապէս Հայաստան հաստատուելու ուղղութեամբ: Կը վերագառնայ Փարիզ և կը գրէ իր «Պրոմէթէոս Ազատագրուած» հատորը: Պրոմէթէոս յունական դիցաբանութեան այն կիսաստուածն էր, որ համարձակած էր գիտութեան լոյսը գողնալ և յանձնել մարդկութեան, որուն համար ան խիստ

պատիժի կ'ենթարկուի ահեղ Զեւսի կողմէ, կը շղթայուի ու կը նետուի Կովկասեան լեռներու խոր կիրճերէն մէկուն մէջ:

Պրոմէթէոսը նորաստեղծ Հայաստանն էր, որ քանդած էր վեց հարիւր տարիներու ստրկութեան շղթաները և բռնած էր գիտութեան ու զարգացման ուղին:

Տրամաբանական էր որ Զապէլ Յսայեան որոշէր վերջնականապէս կայք հաստատել հայրենիքի մէջ՝ իր մտաւորական կարողութիւնները ի սպաս դնելու Խ. Հայաստանի վերականգնման: Հետեւաբար, դրական պատասխան տալով Հայաստանի ղեկավարութեան հրաւերին, ան 1935 թուականին իր զաւակները առնելով վերջնականապէս կը հաստատուի Երեւան՝ շանսալով բարեկամներու խորհուրդներուն որ ԽՍՀՄ վարչակարգը կրնար բարի աչքով չընդունիլ իր հայրենադարձութիւնը: Շուտով Զապէլ Յսայեանը կը տեսնենք գրական աշխոյժ գործունէութեան մէջ՝ միաժամանակ որպէս դասախօս արեւմտեան գրականութեան և պատմութեան Երեւանի Պետական Համալսարանէն ներս:

Ցաւօք սրտի այս մեծագոյն կնոջ ներդրումը հայ իրականութենէն ներս շատ շուտով կասեցուեցաւ՝ անհատի պաշտամունքի տիւմարագոյն տարիներուն: Հազիւ երկու տարի անցած ան մեղադրուեցաւ որպէս ... ֆրանսական կայսերապաշտութեան գործակալ և նետուեցաւ «չեկայի» բանտախուցը: Ան դատապարտուեցաւ մահուան, բայց շնորհիւ կարգ մը ազդեցիկ հայ քաղաքական գործիչներու խորհուրդին ան անընդհատ նամակներով դիմեց «ազգերու և ժողովուրդներու հայր» յորջորջուած Ստալինին և իր մահապատիժը փոխարինուեցաւ տասը տարի Սիպիրեան աքսորի: Վերջին լուրերը իրմէ կը հասնին 1943-ին՝ Սիպերիոյ աքսովայրէն...

Զապէլ Յսայեան իր ետին կը թողուր հսկայական չիրագործուած ծրագիրներ և իր զաւակները՝ Հրանդն ու Սոֆիկը, որոնց կեանքն ալ շատ փայլուն ընթացք մը չունեցաւ:

Իսկական արժէքները յաւիտեանս անտես չեն մնար և օրին մէկը կը յայտնաբերուին անպայման: Այդպէս ալ պատահեցաւ: Տասնամեակներ ետք, 8 Մարտ, 2018-ին, Կանանց միջազգային տօնին օրը ի ներկայութեան քաղաքապետին և հայ ու ֆրանսացի մտաւորականներու, հանդիսաւոր արարողութեամբ մը Փարիզի փողոցներէն մէկը անուանուեցաւ Rue Zabel Yesayan՝ «լոյսի քաղաքի» 11-րդ թաղամասին մէջ՝ ոչ շատ հեռու Փեր լա Շեզ նշանաւոր գերեզմանոցէն, ուր յաւիտենապէս կը հանգչին Մովսիսն ու էտիթ Փիաֆը, Օսքար Ուայլտը, Մարսէլ Փրուստ և ուրիշներ:

Լաւատեսօրէն սպասենք որ յառաջիկայ տարիներուն Երեւանը և հայրենի պետութիւնը եւս տէր կենայ իր ապաբախտ դուստրին և պատշաճ արարողութեամբ մը «տուն տայ» իր զաւկին:

Դ. Մ. ԳՈՃԱՅԵԱՆ

ԶԱՊԷԼ ԵՍԱՅԵԱՆ ԵՐԵՒՈՅԹԸ 20-ՐԴ ԳԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ

(Համառոտ ակնարկ ծննդեան 140 և մահուան 75-ամեակներուն առթիւ)

Ամփոփում

Ծնած էր Իսկուտար, Պոլիս: Ան առաջին Օսմանեան քաղաքացի երիտասարդուհին է, որ ուսանած է արտասահման, Սորպոնի համալսարան: Գրական առաջին փորձերը սկսած է «Ծաղիկ», *Mercure de France*, «Մասիս», «Անահիտ» և «Արեւելեան Մամուլ»-ի մէջ: Փարիզի մէջ ան ամուսնացած է նկարիչ Տիգրան Եսայեանի հետ (1874-1921):

1909-ին Կիլիկիոյ կոտորածներէն ետք ղրկուած է Ատանա և Կիլիկիոյ այլ վայրերը և իր տպաւորութիւններն ու խոհերը արտայայտած է «Աւերակներուն» մէջ, այդպիսով Կ. Պոլսոյ հայ մտաւորականութեան ուշադրութիւնը հրաւիրելով Կիլիկիոյ աղէտին վրայ: Հայ կնոջ հոգեկան աշխարհին, անոր դերին և կարեւորութեան մասին ամենէն բեղուն գրիչը եղած է: 1933 թ.-ին կը ներգաղթէ Խորհրդային Հայաստան, ուր կը լծուի գրական-հասարակական կեանքի վերելքին: Դժբախտաբար ան արդարօրէն կ'ամբաստանուի ֆրանսական լրտես ըլլալու մէջ և կ'աքսորուի Սիպերիա, ուր կը մահանայ 1943 թ.-ին:

DR. M. KOJAYAN

THE APPEARANCE OF ZABEL YESAYAN

IN THE ARMENIAN HISTORY OF THE TURN OF THE 20TH CENTURY

(A brief commentary on her 140th anniversary and 75th year of commemoration of death)

Summary

Zabel Yesayan was born in Scutari (Constantinople). She was the first and the youngest woman in the Ottoman Empire to study abroad, at Sorbonne University. She made her first literary attempts in periodicals *Tsaghik*, *Mercure de France*, *Massis*, *Anahit*, *Arevelian Mamoul*. In Paris, she got married to painter Dickran Yessayan (1874-1921).

In 1909, after the massacres of Adana, she was sent to various places in Cilicia and published "The Ruins", drawing the attention of Armenian intellectuals of Constantinople to the tragedy of Cilicia. Her prolific pen captured the Armenian woman's inner life, her role and importance. In 1933, she repatriated to Soviet Armenia, where she actively took part in the rebuilding of the nation, meanwhile teaching foreign literature at Yerevan State University. Unfortunately, she was falsely accused of being a French spy and was exiled to Siberia, where she died in 1943.